22.09.26 - 23.09.26
14:30
Անցանց
Գրանցումը փակ է
☐

Պահպանել Google օրացույցում
ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետ, 302 լսարան

Ս.թ. սեպտեմբերի 22-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետում Պատմության փիլիսոփայության և տեսության լաբորատորիայի նախաձեռնությամբ կմեկնարկի «Աշխատարան Լինն Մեսկելի հետ» աշխատաժողովը:

Երկօրյա աշխատարանը կվարի Փենսիլվանիայի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր, հնագետ և մարդաբան Լինն Մեսկելը, որի գիտական գործունեությունը միավորում է հնագիտությունը, ժառանգության ուսումնասիրությունները, սոցիալական և քաղաքական մարդաբանությունը, հետգաղութատիրական տեսությունները:

Աշխատարանը տեղի կունենա.

- **22.09.2026-ին՝ 14:30–16:00-ն,**
- **23.09.2026-ին՝ 14:30–16:00-ն:**

Քննարկման թեմաներն են.

- **Օր առաջին՝ *«Պատերազմ և անվտանգություն. ժառանգության հակամարտությունն ու ՄԱԿ-ի խորհուրդը»,***
- **Օր երկրորդ՝ *«Փրկելով աշխարհը վանդալիզմի համատեքստում»:***

Մասնակիցներին նախապես կտրամադրվեն հոդվածներ և աղբյուրներ, որոնց ընթերցումը կնպաստի քննարկումների արդյունավետությանը:

Մասնակցության հայտը անհրաժեշտ է լրացնել **մինչև ս.թ. սեպտեմբերի 16-ը:**

Գրանցումը՝ այստեղ:

Աշխատանքային լեզուն անգլերենն է:

Աշխատարանի ավարտին կտրվեն մասնակցության հավաստագրեր:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
(+37460) 710000
info@ysu.am